

Տաշիրի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով

Տիպ՝ [Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ](#)

Հայտատու՝ Տաշիրի համայնքապետարան

հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդված

2020թ. մարտի 12-ին, ժամը 1130 ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում՝ Վ.Սարգսյան փողոց, թիվ 94 հասցեում, կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով:

Աճուրդի է դրվում հետևյալ լոտը՝

Լոտ 1 Տաշիր համայնք, գյուղ Մեղվահովիտ հասցեում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 10326,4քմ 4-րդ կարգի արոտվայրը (ծածկագիր՝ 06-076-0306-0004) գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, 890000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Լոտ 2 Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, 5-րդ թաղամաս, թիվ 192/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 226,7քմ հողամասը (ծածկագիր՝ 06-008-0103-0137) 179550 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում, այն հարում է հաղորդակցության ուղիներին:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա) հայտ,

բ) աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր,

գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթերը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի մարտի 9-ը: Վաճառվելիք լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի): Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Նախավճարի չափը մեկնարկային գնի 5 % չափով, աճուրդի մասնակցության վճարը 2000 դրամ:

Լոտ 1-ի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտվայրի աճուրդը չկայանալու դեպքում 2-րդ աճուրդը կազմակերպվում և անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ 2021 թվականի մարտի 23-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-29-31,

2-34-06 հեռախոսահամարներով:

**Հասցե՝** ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր Վ. Սարգսյան 94

**Հեռ.՝** 025422168,025423406

**Էլ. փոստ՝** [tashirhamaynq@bk.ru](mailto:tashirhamaynq@bk.ru)